

## ԱԻԵՏԵԱՆ ԿԱՐԻՆԷ

### ՂԵՒՈՆԴ ՎԱՐՂԱՊԵՏ ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒ

Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը XIX դարի կէսերի նոր ձեւավորուող մտաւորական սերնդի առաջին ներկայացուցիչներից էր, որոնք սկսել էին գիտակցել ազգային հոգեւոր արժեքների կարեւորութիւնը, ձեռնամուխ լինելով դրանց յայտնաբերման, գրառման եւ հրատարակման աշխատանքներին:

Նա ինքնակենսագրութիւն չի թողել, կենսագրութեան մասին տեղեկութիւնները կարելի է քաղել իր աշխատանքներից: Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը ծնուել է 1829 թ. Վան քաղաքում յայտնի վաճառական Աւետիս Փիրղալէմեանի ընտանիքում: Մորը՝ Իւղաբերին, կորցրել է մանուկ հասակում, ինքը վեց տարեկանից յաճախել է Արարուց ուսումնարան, աշակերտել է Պետրոս աւագ քահանային, որ ժամանակի յայտնի երաժիշտներից էր: Ընտանիքի նիւթական անապահով վիճակից ելնելով՝ որոշ ժամանակ անց ընդունուել է աշակերտ մի դերձակի մոտ, ընթացքում մի քանի վարպետների փոխելուց հետո թողել է արհեստը: 1850 թուականին ուխտի գնալով մոտակա վանքերը՝ այցելում է Լիմ կղզի եւ էլ ետ չի վերադառնում, դառնում է անապատի վանահայր Թոփուզեան Յակոբ եպիսկոպոսի, այնուհետեւ Վանի առաջնորդ Շիրոյեան Գաբրիէլ եպիսկոպոսի աշակերտը: Վերջինից էլ 1855 թուականին ստանում է աւագ սարկաւագութեան աստիճան: Այդ շրջանում Վարագա վանքում հաստատուում էր Մկրտիչ Խրիմեանը եւ Հայաստանի տարբեր կողմերից իր շուրջը համախմբում աշակերտների, որոնց մէջ էին նաեւ Ղեւոնդ Փիրղալէմեանը եւ Գարեգին Սրուանձտեանցը: Վերջինս, որպէս բանահաւաք, ազգագրագէտ, հասարակական գործիչ, բաւականին ուսումնասիրուած հեղինակներից է, ինչը չի կարելի ասել Փիրղալէմեանի մասին: Երկուսով որոշում են ճամփորդել (1859 թ.) գիտական նպատակով, չնայած որ առանձնապէս կանոնաւոր կրթութիւն չէին ստացել, սակայն արդեն համոզուել էին, որ վանքերում պահուող ձեռագրական ժողովածոները

շատ հարուստ նիւթեր են պարունակում պատմութեան տարբեր հարցերի, մատենագրութեան ուսումնասիրութեան համար:

Եղել է քարոզիչ Ղալաթիայի (1870 թ.) եւ Սամաթիայի Ս. Յակոբ եկեղեցիներում, 1873-1878 թթ. վարել է Լոնդոնի եւ Մանչեստրի թեմի առաջնորդութիւնը, աշխատել է զանազան յանձնաժողովների կազմում: Փիրղալէմեանը շատ է ճամփորդել, քսան տարի ճամփորդելով Հայաստանում՝ նկարագրել է իր ուղեւորութիւնները, հաւաքել է արձանագրութիւններ եւ ձեռագրական յիշատակարաններ: Դրանց մի փոքր մասը միայն, իր ասելով մէկ տասներորդը 1888 թ. հրատարակել է իր «Նօտարք Հայոց» կոչուած աշխատութեան մէջ, իսկ մեծագոյն մասը Գիւտ քահ. Աղանեանցը. «...1898 թուին երեք մեծ կապոցների մէջ կնքուած, հանգ. Յովհաննէս աւագ քհ. Մկրեանի յանձնարարականով Կ. Պոլսից բերելով յանձնեցինք հանգ. Տ. Մկրտիչ կաթողիկոսին եւ այժմ գտնում է Էջմիածնի մատենադարանում»<sup>1</sup>: Կասկածներ են եղել, որ Մ. Աղանունու յիշատակած երեք մեծ կապոցներից ոչ բոլորն են տեղ հասել: Թիֆլիսում հրատարակուող «Մուրճ» ամսագրի յօդուածագիրը 1903 թ. գրում է, որ Փիրղալէմեանի բոլոր աշխատութիւնները կաթողիկոսի կարգադրութեամբ պէտք է տեղափոխուէին Կ. Պոլսից Էջմիածին, սակայն տեղ է հասել միայն չնչին մասը, իսկ մնացած ասելի կարելորդ՝ զանազան տարեգրութիւններ, ժամանակագրութիւններ, հաւանաբար, կորել են<sup>2</sup>:

Իր ուղեւորութիւնների ընթացքում Փիրղալէմեանը երկու անգամ այցելել է Ս. Էջմիածին, առաջին անգամ Վանից 1860 թ.<sup>1</sup> Խրիմեան Հայրիկի, Երեմիա եւ Իգնատիոս եպիսկոպոսների եւ ուրիշների հետ, երկրորդ անգամ՝ 1864 թ. Կ. Պոլսից: Ճամփորդութիւնների ոտանաւոր նկարագրութիւնները հրատարակել է «Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռ Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս» (1871 թ., Կ. Պոլիս), «Չորս ընկերք, որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպոլիս» (1882 թ., Թիֆլիս) խորագրերով: 1880 թ. ճամբորդութեան առիթով Կ. Պոլսի պատրիարք Ներսէս արքեպիսկոպոսը կոնդակ է ուղարկում

---

<sup>1</sup> «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ ԾԴ: Հմմ. Մ. Եպս. Աղանունի, Միաբանք եւ այցելութեան Հայ Երուսաղէմի, Եղմ., 1929, էջ 234:

<sup>2</sup> «Մուրճ», 1903, 11, էջ 73:

թեմերի առաջնորդներին եւ վանահայրերին՝ խնդրելով աջակցել Ղեւոնդ վարդապետ Փիրղալեմեանին, որ որպէս իր ներկայացուցիչ պէտք է այցելի Վան, Աղթամար, Կարին, Բաղէշ, Երիզա-Բալու, Քղի, Խարբերդ եւ միւս հայաբնակ գաւառները՝ ուսումնասիրելու վանքերում պահուող ձեռագրերը եւ ընդօրինակելու:

«Նօտարք Հայոց»-ի առաջաբանում, խօսելով գրքի հրատարակութեան հանգամանքների եւ դժուարութիւնների մասին, գրում է, որ մասամբ իրագործել է իր առջեւ դրուած խնդիրը. «...բերել ի ձեռն եւ հաւաքել ի մի թէ ի Ձեռագիր մատենից, թէ ի Տարեգրութեանց, թէ յԱրձանագրութեանց վանորէից եւ եկեղեցեաց, եւ թէ յայլ իրաց՝ զայնս ամենայն բանս՝ որք պատկանին մերս Ազգային պատմութեան եւ գաւառագրութեան...»<sup>3</sup>: Թէեւ հաւաքածոյի մէջ ունեցել է ժամանակով աւելի հին յիշատակարաններ, բայց ինչ-ինչ պատճառներով ընտրել է 1393-1467 թթ. ժամանակագրական սահմանները՝ Աղթամարի Զաքարիա Բ Կաթողիկոսի նահատակութիւնից մինչեւ Ջհանշահի մահը: Հաւաքած նիւթը բաժանել է երեք մասի՝ արձանագրութիւն, տարեգրութիւն, յիշատակարան: Մտադրութիւն է ունեցել գրքին կցել անձնանունների եւ տեղանունների ցանկեր, որ սակայն չի կարողացել իրականացնել եւ թողել է աւելի «յաջող ժամու եւ ժամանակի»: Արժեքատուր ու կարելուր են «Նօտարք Հայոց»-ի տողատակի ծանօթագրութիւնները:

Նա ուխտաւորութեամբ այցելել է Երուսաղէմի Ս. Յակոբի վանքը եւ 1891 թ. այնտեղ վախճանուել եւ թաղուել Սիոնի գերեզմանատանը: Չափածոյ տապանագիրը յօրինել է Խրիմեան Հայրիկը, որի սիրելի աշակերտներից էր Ղեւոնդ վարդապետը, եւ որի յիշատակարանների հաւաքածոյի հրատարակման համար դիմել էր Գէորգ Դ Կաթողիկոսին<sup>4</sup>:

Փիրղալեմեանին է վերագրում «Աղթամարայ կաթողիկոսների պատմութիւն» աշխատութիւնը, որ 1903 թ. արժանացել էր «Սահակ-Մեսրոպեան» մրցանակաբաշխութեան պարգեւին: «Մուրճ»-ի նոյն յօդուածագիրը գրում է. «...ոմն բանագող Խաչատուր Լեւոնեան մի

---

<sup>3</sup> «Նօտարք Հայոց», Կ. Պոլիս, 1888, էջ Ե:

<sup>4</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիւան, ցուցակ 20, թղթ. 235, վաւ. 41:

քանի դուրուշներով գնել էր նրա ժառանգներից ու նախ Պոլսոյ «Բիւզանդիոն» թերթում հրատարակեց եւ ապա այս տարի իբրեւ իր սեփական գործ առանց ամաչելու ներկայացրեց եւ խաբեբայութեամբ կարողացաւ տանել մրցանակը: Ժամանակին այդ մասին բողոքներ եղան Պոլսոյ թերթերում, բայց մրցանակաբաշխութեան մասնաժողովի պատուարժան անդամները չկարողացան ստուգի վերահասու լինել խնդրի էութեանը»<sup>5</sup>:

Տեական ժամանակ չէր, որ ստանձնել էր Մանչեստրի բրիտանահայ թեմի առաջնորդութեան պաշտօնը, երբ Կ. Պոլսի «Օրագիր»-ը, խիստ քննադատական յօդուածներով՝ «Մանչեսթրի հայ գաղթականութեան վրայ. քանի մը խօսք - Խառն ամուսնութիւն, Նորածնութիւն, Ընթերցասիրութիւն, Լեզու, Բարեպաշտութիւն, Վաճառականութիւն...» անդրադարձել է բրիտանահայ փոքրաթիւ համայնքին: Քննադատութեանը արձագանքել էր Էջմիածնի «Արարատ»-ը, որ առանց կասկածելու յօդուածի ճշմարտացիութեանը արտատպել էր այն՝ կցելով խմբագրութեան ծանօթագրութիւնները<sup>6</sup>: Հենց յօդուածի արտատպութիւնն էլ մեծ ցաւ էր պատճառել Փիրղալէմեանին, եւ նա, չնայած որ արհամարհական լութեամբ անտեսել էր «Օրագիր» հրապարակումը՝ համարելով այն «նուաստ զրախօսութիւն», որոշում է պատասխանել «Արարատ»-ին՝ ներկայացնելով այն դժուարութիւնները, որոնց ենթակա էր հայ համայնքը եւ պաշտպանելով անտեղի հարձակումներից որպէս հոգեւոր առաջնորդ, որ մտահոգ էր Մանչեստրի հայ համայնքի եւ Էջմիածնի միջեւ արժանավայել հարաբերութիւններով եւ աւարտում է խօսքը յորդորով. «...ուստի խմբագիր Հարք, սոքա քաջալերութեան եւ խրախուսանաց պէտք ունին՝ քան թէ բամբասանաց, եւ յԱրարատայ խմբագրութենէն յորդոր եւ քաջալերութիւն սպասեն»<sup>7</sup>:

Փիրղալէմեանը, օգտուելով Մեծ Բրիտանիայում գտնուելու հանգամանքից, Բրիտանական թանգարանի հայերէն ձեռագրերի յիշա-

---

<sup>5</sup> «Մուրճ», 1903, 11, էջ 84:

<sup>6</sup> «Արարատ», 1875, էջ 357, 358, 397-399, 438-440, 467-470:

<sup>7</sup> Ղեւոնդ Ծ. Վարդապետ Տոսպեցի, Ի Մանչեսթրէ. խմբագրութեան Արարատ ամսագրոյ, «Արարատ», 1875, էջ 466:

տակարանները եւս ընդգրկել է իր ժողովածոյի մէջ՝ ամբողջացնելով այն:

Նրա վաստակի գնահատողներից ակադ. Լ. Խաչիկեանը գրում է. «Առաջին լուրջ փորձը համեմատաբար մեծ թիւ կազմող ձեռագրերի յիշատակարանների ժողովածու կազմելու ուղղութեամբ կատարել է Ղեւոնդ Փիրղալէմեանը»<sup>8</sup>: Եւ քանի որ Փիրղալէմեանը, առաջինը լինելով, աչքի առաջ չուներ նմանատիպ որեւէ աշխատանք, ընդօրինակելիս իրեն որոշ անկարելոր թուացող հատուածները կրճատել է կամ խմբագրել ու վերաշարադրել, սակայն այդուհանդերձ բնագրի բովանդակութիւնը ճիշտ է ներկայացրել: Այդ հանգամանքն էլ Գիւտ Աղանեանին առիթ է տալիս կարծելու, որ Փիրղալէմեանը. «...այդ քրտնաջան, բայց անհմուտ բանահաւաքը, որ սովոր է արտագրել յիշատակարանները ըստ քմաց, շատ տեղ յապաւելով, առանց որեւէ կէտադրութեան եւ տարբեր ընթերցուածներով: ...Փիրղալէմեանը մի անդուլ եւ եռանդուն հաւաքող էր հնագրական եւ տեղագրական նիւթերի, բայց դժբախտաբար, նրան պակասում էր հաւաքելու հմտութիւն...»<sup>9</sup>: Իր երկարատեւ ճամփորդութիւնների ընթացքում հաւաքել է արձանագրութիւններ, վանքերում եւ մասնաւոր անհատների մոտ պահուող ձեռագրերի յիշատակարաններ, տարեգրութիւններ: Կաթողիկոսական դիւանի՝ Փիրղալէմեանի թողոնի նկարագրութիւնը, որ ընդամենը 3-4 էջ է, կազմում է վաւերագրերի, ստորագրութիւնների, անհատների ու հիմնարկութիւնների կնիքների նկարագրութիւններ: Յիշատակարանների մնացած, մեծ մասը, որ, ինչպէս արդեն գիտենք, Գիւտ աւագ քահանայ Աղանեանը բերել էր Պոլսից Էջմիածին, պահում են Մաշտոցեան Մատենադարանում, դրանք 4515, 6273, 6332 ձեռագրերն են: Յիշատակարանների այս հատուածը Փիրղալէմեանը վերնագրել է «Նշխարք պատմութեան հայոց» եւ ամենայն հաւանականութեամբ այդ հատորները եւս պատրաստում էր հրատարակութեան, սակայն չհասցրեց: Ընդունուած է 6273 ձեռագիրը<sup>10</sup> համարել

---

<sup>8</sup> ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ XXII:

<sup>9</sup> «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ Ի2, ԾԴ:

<sup>10</sup> Ձեռագիրը սկսել է գրել Մանչեստրում եղած ժամանակ: Տե՛ս ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:

«Նշխարք»-ի առաջին հատոր, իսկ 4515-ը՝ երկրորդ, գոյություն ունի նաեւ սեւագիր օրինակը (6332): Ամբողջ նիւթի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 887-1799 թուականները:

Փիրղալէմեանի հրատարակած հատորից եւ դեռեւս անտիպ յիշատակարաններից վերահրատարակել եւ հրատարակել են Գ. Յովսէփեանը, Լ. Խաչիկեանը, Վ. Յակոբեանը, Ա. Մաթեոսեանը յիշատակարանների իրենց հրատարակութիւններում՝ չնայած դրանց թերութիւններին եւ յաճախ ոչ լիակատար լինելու հանգամանքին: Ինչպէս Ղ. Փիրղալէմեանն է գրում իր «Նշխարք Հայոց» աշխատութեան մէջ (ՄՄ, ձեռ. 4515) դեռեւս 1874 թ. Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը մեծ ջանքեր էր գործադրում՝ այդ ձեռագրի մի օրինակ ունենալու համար. «...զմի օրինակ ձեռագիր յիշատակարանաց մերոյ խնդրէ շնորհել ընծայ Վենետկոյ թանգարանին»:

AVETYAN KARINE

### **GHEVOND ARCHIMANDRITE PIRGHALEMYAN AND THE MISCELLANIES OF HIS DIARIES**

The information about his biography can be received from his works, because there is no autobiography. Ghevond Pirghalemian was born in 1829 in Van, he got his preliminary education at Araruts lyceum of Van. Later due to poor financial conditions of his family he became an apprentice of a tailor. During that period he changed several masters and eventually gave up the craft. In 1850, he visited Lim Island and didn't return any more. At first, he became the disciple of Hakob Bishop Topuzian, then of Gabriel Bishop Shiroian. In the course of that period Mkrtich Khrimian settled in the cloister of Varaga and united around him disciples from different regions of Armenia, Ghevond Pirghalemian and Garegin Srvantstians were among them. They decided to travel together for scientific purpose (in 1859). From 1873 to 1878 he became the leader of British-Armenian community in Manchester.

He travelled a lot and described all the details of his trips. He managed to collect different materials like historical Protocols, Chronicles and Chronologies. Unfortunately a very little fraction of them were published under the title “Notarq Hayots” in 1888. Priest Gyut Aghaniants brought most of them to Etchmiadzin from Constantinople, and now they are kept in Matenadaran.